



Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«7» ապրիլի 2016 թ. թիվ 90 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՄՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ԴՈԿՍՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը ընդունված է «ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության 3-րդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» օրենքի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ և 18-րդ հոդվածի 1-ին կետերի, ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N238-Ն որոշման «Հայաստանի Հանրապետության ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգ» -ի պահանջներին համապատասխան:

1.2. Սույն կանոնակարգով սահմանվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպությունների (այսուհետև՝ Կազմակերպություններ) ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ընդունելության, ինչպես նաև հայցորդության ձևակերպման կարգը:

1.3. Ասպիրանտուրան, դոկտորանտուրան և հայցորդությունը հետբուհական կրթության համակարգում գիտամանկավարժական ու գիտական բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձևեր են, որոնք իրականացվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության «ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողով» գործակալության (այսուհետև՝ ԲՈՀ) «Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկին» համապատասխան մասնագիտություններով:

1.4. Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, ով սովորում է ասպիրանտուրայում՝ տեսական մասնագիտական գիտելիքները խորացնելու և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն պատրաստելու, իսկ հետազոտողի հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի առկայության դեպքում՝ նաև համապատասխան որակավորման աստիճան ստանալու համար:

1.5. Դոկտորանտը գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձ է, ով ընդունվել է դոկտորանտուրա՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն պատրաստելու համար:

1.6. Հայցորդը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը կազմակերպությանը կից պատրաստում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն:

2. ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ԴՈԿՏՈՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1. Ասպիրանտուրա

2.1.1. Ասպիրանտուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ այն քաղաքացիները, ովքեր ստացել են մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում:

2.1.2. Նախկինում ասպիրանտուրան ավարտած կամ ասպիրանտուրայից անհարգելի պատճառով ազատված անձինք կրկին պետպատվերով ասպիրանտուրա ընդունվել չեն կարող:

2.1.3. Ասպիրանտուրայի ընդունելության համար դիմորդն ավարտական տարվա ընթացքում պետք է հանձնած լինի օտար լեզվից և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներից տարբերակված ստուգարքներ՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից տվյալ ուսումնական տարվա համար սահմանված ներքին շեմով բալային գնահատումով:

Օտար լեզվից՝

ա) անգլերեն՝ “TOEFL” (iBT) 46 միավոր կամ “IELTS” 5.5 միավոր

բ) գերմաներեն՝ “oñ DaF” 60 միավոր

գ) ֆրանսերեն՝ “TCF” 200 միավոր:

Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ՝ 25 միավոր

2.1.4. Օտար լեզվից և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներից քննության արդյունքները դիմումի և պահանջվող մյուս փաստաթղթերի հետ դիմորդը ներկայացնում է ընդունող հանձնաժողովին:

2.1.5. ԳԿՄԿ տնօրենի հրամանով ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար ստեղծվում է ընդունող հանձնաժողով՝ տնօրենի նախագահությամբ:

2.1.6. Ասպիրանտուրայի առկա ձևով ուսուցման համար մայիս ամսին՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հատկացված տեղերի և ԿԳ նախարարության կողմից առաջարկված ժամանակացույցի, ասպիրանտուրայի բաժնում՝ ընդունող հանձնաժողովը կատարվում է դիմորդների փաստաթղթերի ընդունում: Մասնագիտական քննություններն անցկացվում են հունիս ամսվա առաջին տասնօրյակի ընթացքում: Քննության ժամանակացույցը հաստատում է գիտական կազմակերպության ղեկավարը: Հարցաշարը տրամադրվում է մասնագիտական քննությունից մեկ ամիս առաջ: Անցկացման օրվա, տեղի և ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվությունը յոթ օր առաջ փակցվում է գիտական կազմակերպության նախատեսված վայրում և տեղադրվում կայքէջում:

2.1.7. Ասպիրանտուրայի հեռակա ձևով ուսուցման համար փաստաթղթերի ընդունումը կատարվում է հոկտեմբեր ամսին, իսկ մասնագիտական քննությունները՝ նոյեմբեր ամսվա առաջին տասնօրյակի ընթացքում:

2.1.8. Ասպիրանտուրա ընդունվողը մասնագիտությունից քննությունը հանձնում է ՀՀ ԳԱԱ համապատասխան գիտական կազմակերպությունում, որտեղ կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծվում է մասնագիտական քննական հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտական բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող երեքից հինգ մասնագետ:

2.1.9. Ասպիրանտուրա ընդունվելու դիմումը հասցեագրվում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենին:

2.1.10. Դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը (երկու օրինակից)՝

2.1.10.1. Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի և դրանց հավելվածների պատճենները (Եթե դրանք դեռևս ստացված չեն, ապա համապատասխան տեղեկանք բուհից), օտարերկրա

պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին

1. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
2. Ինքնակենսագրություն
3. Երեք լուսանկար (3x4 չափսի), որից երկուսը փակցված անձնական թերթիկներին,
4. Օտար լեզու և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականները կամ դրանց համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով բալային գնահատմամբ)
5. Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում (մեկ օրինակ)
6. Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում)
7. Անձնագրի և զինվորական գրքույկի պատճենները
8. Երկու թղթապանակ (կապովի):

2.1.11. Անձնագրի, զինվորական գրքույկի, բարձրագույն կրթության մասին դիպլոմի բնօրինակները ներկայացվում են անձամբ:

2.1.12. Մասնագիտական քննությունները անցկացվում են ԳԱԱ համապատասխան գիտատական կազմակերպությունում ձևավորված մասնագիտական քննական հանձնաժողովում: Մասնագիտական քննության անցկացումն արձանագրվում է ընդունվողի քննական թերթում, որտեղ նշվում են առաջադրված հարցերը և ստացված գնահատականը: Քննական թերթում ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի անդամները (2-ից ոչ պակաս): Մասնագիտական քննությունը հանձնված է համարվում, եթե դիմորդը ստացել է առնվազն «13» միավոր «20» միավորանոց սանդղակով:

2.1.13. Քննության վերահանձնում չի թույլատրվում:

2.1.14. Մասնագիտական քննության արդյունքը դիմորդի ցանկությամբ կարող է ուժի մեջ մնալ նաև հաջորդ տարվա ընդունելության համար:

2.1.15. Դիմորդը քննությանը ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:

2.1.16. Օտարերկրացիների ընդունելությունն ու ուսուցումը ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայում իրականացվում է «ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության 3-րդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» օրենքի և «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ»-ի պահանջներին համապատասխան:

2.1.17. Մրցույթի անցկացում

2.1.17.1. Մրցույթն իրականացվում է՝ ըստ մասնագիտական քննությունից ստացած գնահատականի: Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները ըստ հերթականության.

- 1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի ընդհանուր միջին որակական գնահատականը.
- 2) բակալավրի և մագիստրոսի ընդհանուր միջին որակական գնահատականի գումարը.
- 3) հրատարակված գիտական աշխատանքների թիվը.

4) միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը (զեկուցումները):

2.1.17.2. Ասպիրանտի ընդունելության մասին որոշումը կայացնում է ՀՀ ԳԱԱ Նախագահությունը, հրամանագրումը կատարվում է համապատասխան գիտական կազմակերպության տնօրենի հրամանով՝ կնքելով ասպիրանտի հետ համապատասխան պայմանագիր:

2.2. Դոկտորանտուրա

2.2.1. Դոկտորանտուրայում ձևակերպվում են ՀՀ այն քաղաքացիները, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Դոկտորանտուրայի տևողությունը 3 տարի է:

2.2.2. Դոկտորանտուրայում ձևակերպվողները ներկայացնում են գիտական, տնտեսական կամ սոցիալ-մշակութային նշանակություն ունեցող հիմնարար կամ կիրառական հետազոտությունների ծրագիր (նախագիծ):

2.2.3. Դոկտորանտուրայում ձևակերպվելու համար դիմումը տրվում է համապատասխան գիտական կազմակերպության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

ա) գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագրի պատճենը (այլ երկրներում գիտական աստիճանի վկայագիր ստացածների համար՝ նաև ԲՈՀ-ի կողմից տրված համապատասխանեցման հավաստագիրը),

բ) դոկտորական ատենախոսության պլանը,

գ) ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3x4 չափսի),

դ) հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի և հայտնագործությունների, ինչպես նաև կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունների ցանկը:

2.2.4. Անձնագրը և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագիրն ձևակերպվողը ներկայացնում է անձամբ:

2.2.5. Գիտական կազմակերպության համապատասխան բաժինը փաստաթղթերի քննարկման հիման վրա ներկայացնում է եզրակացություն, որի դրական արդյունքի դեպքում կազմակերպության գիտական խորհուրդը որոշում է ընդունում՝ թեկնածուին դոկտորանտ ձևակերպելու մասին: Դոկտորանտը ձևակերպվում է գիտական կազմակերպության ղեկավարի հրամանով, և նրա հետ կնքվում է պայմանագիր:

2.3. Հայցորդություն

2.3.1. Թեկնածուական ատենախոսության վրա աշխատող հայցորդներ կարող են լինել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձինք:

2.3.2. Հայցորդությունն իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով, տվյալ կազմակերպության սահմանված կարգով, որի տևողությունը չի գերազանցում 5 տարին:

2.3.3. Հայցորդը ձևակերպվում է համաձայն ԳԱԱ համապատասխան գիտական կազմակերպության ղեկավարի անունով ներկայացված դիմումի՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի և դրա հավելվածի

պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին)։

2) հրատարակված գիտական աշխատությունների ցուցակը կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ.

3) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի)։

4) քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմողն աշխատում է)։

2.3.4. Կազմակերպության ղեկավարը, հայցորդի և նախատեսվող գիտական ղեկավարի հետ հարցազրույցի արդյունքների և համապատասխան բաժնի եզրակացության հիման վրա, ԲՈՀ-ի կողմից հաստատված կարգի պահանջներին համապատասխան, հրամանագրում է հայցորդին՝ հաստատելով աստենախոսության թեման և գիտական ղեկավարին։